„ մուրն ու Ղինկիզխանը Ասիան անա-
„ պատ դարձուցին, կը տեսնենք որ կա-
„ ռավարութեան մէջ քաղաքական ի-
„ բաւունք մը, պատերազմի մէջ ալ աղ-
„ գաց իրաւունք մը կայ նէ՝ պատճառը
„ քրիստոնէութիւնն է, և մարդկային
„ ազգը աս բաներուս համար որչափ ալ
„ ընդհակառակ ըլլայ անոր՝ բաւական
„ է „։ (Ասդ. գէր. Ի.Դ. գլ. Է և Ճ)։

Աստուծոյն բանաստեղծը Պայրոն, այն զարմանալի հանճարոյ տեր մարդը՝ որ անտանելի դժբաղդութեամբ վարժեր էր մէյմը առաքինութիւնը պաշտել՝ մէյմը մոլութիւնը, մէյմը ճշմարտութիւն՝ մէյմը ստութիւնը, և սակայն անդադար ճշմարտութեան և առաքինութեան ծարաւով կը տանջուէր, վկայեց թէ ինքը կաթուղիկէ դաւանութիւնը յարգելու ստիպուած է։ Ուզեց որ իր մէկ հատիկ աղջիկը կաթուղիկէ հաւատոյ վարդապետութեանը մէջ կրթուի. և իրեն մէկ թուղթը կեցած է՝ որ անոր մէջ իր աս որոշմանը վրայ խօսելով կ'ըսէ, թէ ասանկ ուզելուս պատճառն ան է որ մէկ եկեղեցւոյ մը մէջ ալ այնչափ ճշմարտութեան ոյս չեմ տեսներ՝ ինչպէս կաթուղիկէ եկեղեցւոյ մէջ։

Պայրընին բարեկամը Ֆոլմա Ասուռ որ անկէ ետքը մինակ ինքը մնաց Ասդղոյ մէջ գերազանց բանաստեղծ, շատ տարի տարակուսելէն ետքը թէ արդեօք ո՞ր հաւատքը ընտրէ՝ քրիստոնէութեան վրայ խորունկ քննութիւններ ըրաւ, հասկըցաւ որ կարելի բան չէ քրիստոնեայ ու լաւ տրամաբան ըլլալ՝ առանց կաթուղիկէ հաւատքը ընտրելու. գիր անցուց իր ըրած քննութիւնները, և թէ ինչպէս բռնադատուեցաւ վերջապէս աս որոշմունքը ընելու.

„ Կեցցէ՛ս, կ'աղաղակէ, կեցցէ՛ս, ո՛վ
„ մի միայն և ճշմարիտ Աստուած, դու
„ որ կենդանութեան մէկ հատիկ ճամ-
„ բան ես, և միայն քու տաղաւարներդ
„ են որ լեզուաց խառնակութեանը
„ հետ բան չունին։ Քու սրբազան
„ խորհրդոցդ շքին տակը հանգչի իմ
„ հոգիս. հեռու ըլլան ինծմէ հաւա-
„ սարապէս թէ այն ամբարտաւանու-
„ թիւնը որ անոնց խրթնութիւնը կ'արտ-
„ համարհէ, և թէ այն անխոհեմ հա-
„ ւատքը՝ որ անոնց գաղտնեացը խելք
„ հասցընել կ'ուզէ։ Ամէն մէկուն և թէ
„ մէկալին դէմ սրբոյն Գոստինոսի
„ լեզուն կը բանեցընեմ. Ասուն խօսէ,
„ ես զմայլիմ. դու վիճաբանէ, ես հա-
„ ւատամ. կը տեսնեմ խորութիւնը՝
„ թէպէտ և յատակը չկարենամ հաս-
„ նիլ „։

ԱՂԳԱՑԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Կերակրէ դպրոց։

Ազգի մը մէջ կ'ըլլայ ատեն որ գործող աշխատող կը գտնուի, գործ ցուցընող կամ գործ չգտնուիր. երբեմն ալ անոր հակառակը։ Ազգասէր անձինք այլ և այլ օգտակար առաջարկութիւններ ըրին ազգերնուս, բայց տեսնելով որ 'ի գործ դնելն անկարելի է՝ լռեցին. որովհետև ազգերնիս նոյն ժամանակը գիտութեան և քաղաքականութեան ծաղկոցները ուրիշներու թողուցած՝ ինքը քարուտ ու ժեռուտ լեռները կը վազէր, արտաքին վտանգները մտմտալու զբաղած՝ մնաց պիտոյքը գրեթէ բոլորովին մոռցեր էր։ Այց հիմայ որ կրնանք համարձակ յուսալից և ուրախ սրտով ըսել թէ ճիւղ արձակեր է, կոկոն տուեր է զարդացման, և մէկ նոր արեգակնային ջերմութեան մը կը կարօտի որ աւելի բացուի զարդարուի, և իմաստութեան խարուկէն կայծ մը թռեր է մտքին և ետևէ է զանիկայ բռնկցընելու բարերար և ազգասէր անձանց խնամքով, որոնք չեն դադրիր պէտք եղած ձեռնտուութիւնն ընելու իրենց հայրենեաց, ընկերութիւններ կանգնել, ճեմարաններ հաստատել, դպրոցներ բանալ, այլ և այլ օրագիրներ հրատարակել, մէկ խօսքով ջանալ յառաջադիմութեան բարենախանձ մը վառել ամենուն սրտին մէջ. և յայտնա-

պէս ցուցընել Եւրոպական ազգաց թէ Հայոց երկրին բաղդը՝ և ոչ անոնց հանճարը և ձիրքն պատճառ եղան իրենցմէ այնչափ վար մնալուն. ասանկ աղէկ հանգամանաց մէջ գտնելով ազգը՝ ո՞վ կը տարակուսի օգտակար առաջարկութիւններ ընելու անոր՝ որ այնչափ բարերար ազգասէր անձինք կը մնուցանէ իր ծոցին մէջ, որոնք կարելի է օրէ օր իրենց սիրտը աւելցած ազգային սէրը ազգին հաղորդելու օգտակար գործք կը փընտռեն և չեն գտներ. կարելի է ոմանք կը տեսնեն որ ինչուան հիմայ հաստատուած դպրոցները, եղած օրագիրները ամէնքը չեն կշտացրներ, մանաւանդ զանոնք որ տղայութենէ սկսեալ առտուընէ ինչուան իրիկուն կամ խանութին մէջ կը կենան կամ արտը. ուրեմն ասոնց համար ալ ուրիշ օգնութիւն մը հարկաւոր կը ճանչնան։

Ամէն ժողովրդեան մէջ երկու վընասակար բան կայ որ մէկզմէկ կը մնուցանեն ու ազգի մը ընդհանուր վիճակը կը փոխեն, փառքը կը մթնցընեն ու վերջը դէպ 'ի կործանում կը տանին. մէյմը տգիտութիւն որ միշտ զտնանկութիւնը շալակը զարկած կը պտըտի, մէյմին ալ տնանկութիւնը որ յառաջադիմութեան մէկ հատիկ արգելք է. ուրեմն ինչպէս կրնանք ասոնց դէմ առնուլ որոնց երկուքին ալ փորձը ազգերնիս քիչ շատ առեր է. ինչնոր հնարքով կրնանք գիտութիւնը տարածել, մանաւանդ անոնց մէջ որ կեանքերնին խեղճութեամբ կ'անցընեն, օրն 'ի բուն չարաչար կ'աշխատին, արիւն քրտինք կը թափեն, և վաստրկածնին հաղիւ սև հացի մը գին է։ Այս թշուառութեան պատճառն է տգիտութիւնն ու աղքատութիւնը. վասն զի տղաքնին հաղիւ թէ հինգ վեց տարեկան կ'ըլլան, ոմանք իրենց խանութը կը տանին ոմանք ալ արտը. իրենք խեղճ տգէտ՝ տղաքնին ալ կը զրկեն կրթութենէ. դպրոցները մեծամեծաց համար է, կ'ըսեն, աղքատին աշխատիլ կ'իյնայ. բայց ազգին յառաջադիմութիւն ուզողները չեն կրնար անտարբեր աչքով նայիլ ան տղուն վրայ որ հաղիւ բանականութիւնը բացուած կը սկսի խանութը կամ արտը երթալ, առանց մարգուս հոգւոյն և մարմնոյն պէտք եղած ամենահարկաւոր կրթութիւնները ստանալու։ Պէտք է ուրեմն այնպիսի դպրոց մը հաստատել, որ այսպիսի աղքատներն ալ կարենան գալ առանց մէկալ գործքերնէն ետ կենալու, և ահա այս է Կիրակէի դպրոցը։ Այս սքանչելի ազգասիրական գործքը կատարողը մեծ արդիւնք կ'ունենայ ազգին յառաջադիմութեանը, և քիչ ժամանակի մէջ ինքն ալ կը տեսնէ ժողովրդեան վիճակին վրայ զգալի տարբերութիւն մը։ Այս տեսակ դպրոցներ շատ կը գտնուին Եւրոպայի և Ամերիկայի ծաղկած տեղուանքը և օրէ օր աւելի կը տարածուին. ասոնց մեծ օգուտը յայտնի կ'երևնայ երբոր մէկը տեսնէ պատանիները որ տերունական սուրբ օր մը թողուցած գինետունները, ընդունայն խաղի տեղերը և զբօսանքները, հարկաւոր ուսման և կրթութեան զբաղած կ'անցընեն պարապ ժամերնին, ուզած կամ ձեռքերնին ունեցած արուեստին սկզբունքները, տեղեկութիւնները, գիտերը կը սորվին և զանոնք 'ի գործ դնելու խելք կը բանեցընեն և իրենց գործոց յաջողութեան դուռ կը բանան, ու բոլոր սրտանց օրհնենք կուտան ան բարերարներուն որ պատճառ եղան իրենց կրթութեանը։

Այսպիսի դպրոցներուն ալ վախճանը ըլլալով ամէն պէտք եղած բանին պատճառը հասկրցընել ուսակին, ճշմարիտը ստէն զատել, 'ի հարկէ այսպիսի մեծ գործողութիւնը առաջ տանելու համար պէտք է ընկերութիւն մը՝ որ կարենայ ամէն տեղ մարդ հասցընել, քաղաքներէն զատ գեղերն ալ, որ երթան կիրակի օրերը աշխատաւորաց իրենց համար հարկաւոր եղած տեղեկութիւնները սորվեցընեն։ Այս մեայ հիմա դժուարութիւնը որ աս կրթուողներէն շատը պատանի և երիտասարդ ըլլալով, բոլոր շաբաթը աշխատութիւն անցընելէն ետև, կիրակի կամ տօն օրերը ասոնց ուսմունք սորվելը, զուար-

Հութիւններին թողլով, դժուար պիտի գայ։ Բայց աս գիտնալու է որ տղաք այնչափ ուսմունքէ և կրթութենէ չեն փախչիր որչափ վարժապետաց անհոգութենէն կամ՝ անոնց վարմունքէն, որ փոխանակ ուսմունքը և կրթութիւնը տղուն սիրելի ընելու՝ ատելի կ'ընեն կը վհատեցնեն։ Իսկ իր բանը գիտցող և իր օգուտը Հանչցող պատանին որ արդէն կարդալ գրել գիտէ և ազգասէր ընկերութեան մը խնամքին տակն է, առանց վախի և ձանձրութիւն կը զուարճանայ, երբոր բնաւորութիւնը շտկելու, միտքը սրելու, արհեստին վերաբերեալ նոր նոր գիւտերու տեղեկութիւններու դասեր լսէ, գրքեր կարդայ, և երբեմն անձամբ փորձեր ալ ընէ։

Իսկ աս մեծ օգուտն ալ կայ՝ որ բարիքը շատ հաղորդական կ'ըլլայ, երբոր մէկքանի երիտասարդք խելքով կուգան կը սորվին, ուրիշներն ալ կամ՝ անոնց խօսքերէն կամ օրինակներէն գրգռուելով յօժարութեամբ անոնց ընկերութեան մէջ կը խառնուին, և այսպէս կամաց կամաց կը շատնան կրթուողները։

Երկու զօրաւոր բան կայ որ ամէն դժուարութեանց առաջքը կ'առնուն, այսինքն են ընկերութիւն և բարերարութիւն. ասոնք մեր ազգին մէջ ալ հիմա հրաշքներ գործեցին, և չենք տարակուսիր որ աս նոր բարերարութեան ալ ձեռք չզարնեն, որ չէ թէ միայն օգտակար է, հապա ամենահարկաւոր. վասն զի ինչպէս որ մարմին մը առողջ չըսուիր թէ որ անդամներուն մէջ երկուքը կամ իրեքը միայն ողջ ըլլան, այսպէս ալ թէ որ մինակ մեծամեծայ տըղաքը կամ՝ քանի մը դպրոց գնացող տղաք կրթուին, և անդին հաղարաւոր գործաւորք, անկարող գեղացիք՝ թանձր տգիտութեան մէջ խեղդուին. ուրեմն բարերարք և ընկերութիւնք պէտք է որ այսպիսի միջոցով հաղորդեն անոնց ալիրենց արհեստին վերաբերեալ գիտերը և մարդուս հարկաւոր կրթութիւնը. ան ատեն ազգը կը հարստնայ, հայրենիքը կը ծաղկի։

Կիրակէի դպրոցին օգտակար միջոցներն են, նախ գրքատուն մը հաստատել կրթութիւն, ուսմանց և արհեստից վերաբերեալ գրքերու, որ ուզողը առնէ կարդայ ինչ կերպով որ կարգ դրուի առնելու և ետ դարձընելու գիրքը. արհեստ սորվելու տեղեր հաստատել և հմուտ դաստատուներ կարգել. վասն զի ան տղաքը որ խանութի մէջ արհեստ սորվելու համար կ'աշխատին, թէ՛ շատ նեղութիւն կը քաշեն, և թէ՛ մտքերնին դեռ բարի սկզբանց վրայ չհաստատած արհեստի երթալով շուկային մէջ ինչ որ տեսնեն ու լսեն՝ անոնցմով կը հաստատեն սկզբունքնին, գեշ օրինակները վրանին շուտով կը տպաւորուի, ու դիւրաւ կրնան անկիրթ ախտաւոր մարդկանց կարգը անցնիլ, սորված արհեստնին ալ մեքենայի պէս կը սորվին առանց ըրած գործողութեանց պատճառներն ալ իմանալու։ Ինչ հակառակն վերի ըսած արհեստից տեղուանքը ասանց ամենուն ալ հնարքը կրնան գըտնել, ամէն հարկաւոր գործիքներ, մեքենաներ և օրինակներ հոն կը տեսնեն, և զանոնք գործածող Հպատար վարպետներ ալ, որով խանութ երթալէն առաջ կը սորվին արուեստին սկզբունքը, ետքը կ'երթան դիւրաւ'ի գործ կը դնեն։ Այս կերպերով մեր ազգն ալ որ արհեստ սորվելու և գործածելու շատ յարմարութիւն ունի, քիչ ժամանակի մէջ մեծ յառաջադիմութիւն կ'երևցընէ անոնց մէջ։

Երկրորդ օգուտ կ'ըլլայ ասանկ հարկաւոր գրքերը ձրի կամ՝ ցած գնով ցրուել ազգին մէջ, որ փոխանակ տնէրու հիւղերու մէջ պառաւական ափեղցիեղ առասպելներ լսելու՝ առաքինութեանց և հասարակաց օգտակար բաներ խօսուին ու լսուին։

Ինչ որ արուեստներու համար ըսինք՝ նոյն կերպով կրնայ բարոյական և պատմական ուսմունքներն ալ տարածուիլ, որ շատ ալ հարկաւոր են ժողովրդեան կրթութեանը։

Հ. Վ. Պ